

**«Արհեստակցական միությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»  
ՀՀ օրենքի նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի 9.1-րդ հոդվածում՝

- 1) 3-րդ մասի «արհեստակցական միության գրանցման» բառերից հետո լրացնել «, կանոնադրության փոփոխության պետական գրանցման» բառերը.
- 2) 3-րդ մասի «30» թիվը փոխարինել «10 աշխատանքային» բառերով.
- 3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արհեստակցական միությունների գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների փոփոխության պետական գրանցումն իրականացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում:»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: